



Պատասխանատու Օնթարիոյի

ՕԳՈՒՏՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ՕԳՈՒՏՆԵՐ

Աշխատանքի ապահովագրութիւն (EI)

Կարող եք իրաւունք ունենալ աշխատանքի ապահովագրութեան (Employment Insurance (EI)) օգուտները ստանալու, եթէ աշխատանքէ դուրս դրուեցաք ձեր կամքէ արկախ պայմաններու պատճառաւ - օրինակ աշխատանքի պակասութիւն կամ գործաւորներու սեզոնային կամ բազմութեան կրճատումներ: Իրաւունք ունենալու համար, պէտք է հաւաքած ըլլաք բաւարար աշխատանքի ապահովագրելի ժամեր Գանատայի մէջ, նախորդ 52 շաբաթներու ընթացքին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար (EI)-ի մասին, այցելեցէք Service Canada www.servicecanada.gc.ca կամ findlink.at/EI-app

Գանատայի կենսաթոշակի ծրագիր (Canada Pension Plan (CPP))

Ժամադակութիւն պէտք է ընէք ծրագրին ձեր աշխատանքի կենսաթոշակի ընթացքին Գանատայի մէջ: Պիտի կարող ըլլաք ստանալու ձեր (CPP)-ն 60-էն 64 տարիքներու մէջ, բայց ձեր վճարումները պիտի նուազին: Եթէ ուշացնէք առնելու ձեր (CPP)-ի օգուտները, ձեր վճարումները կրնան աւելնալ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար (CPP)-ի մասին, այցելեցէք Service Canada www.servicecanada.gc.ca կամ findlink.at/cpp

Մերութեան անվտանգութեան կենսաթոշակ (Old Age Security Pension (OAS))

(OAS)-ը ամսաթոշակ մըն է վճարուած Գանատացիներուն որոնց տարիքը 65 կամ աւելի է: Իրաւունք ունենալու համար, պէտք է առնուազն 10 տարի Գանատայի մէջ ապրած ըլլաք, 18 տարեկանէն ետք: Յաւելեալ տեղեկութիւններու համար (OAS)-ի մասին, այցելեցէք Service Canada www.servicecanada.gc.ca կամ findlink.at/oldagesecu

Գանատայի մանուկի տուրքի թոշակ (Canada Child Tax Benefit (CCTB))

(CCTB)-ն ամսական վճարում մըն է ֆետերալ կառավարութենէն օգնելու ծնողներուն եւ ուրիշ պահապաններուն մանուկները մեծցնելու ծախսերուն: Պէտք է դիմել օգուտին համար: Օգուտին գումարը կը համապատասխանէ եկամուտի մակարդակին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար (CCTB)-ի մասին, այցելեցէք Canada Revenue Agency - www.cra-arc.gc.ca կամ findlink.at/cra-bnfts

Մանուկի խնամքի ընդհանուր նպաստ (Universal Child Care Benefit (UCCB))

(UCCB)-ն ամսական վճար մըն է ֆետերալ կառավարութենէն իւրաքանչիւր վեց տարեկանէն պզտիկ մանուկի: Այս թոշակը կը տրուի ընտանիքներու օգնելու իրենց մանուկի խնամքի ծախսերուն: Թոշակը ձեռնտու է բոլոր ընտանիքներուն համար, ոչ միայն անոնց որոնք կ'օգտագործեն մանուկի խնամքի ծառայութիւններ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար (UCCB)-ի մասին, այցելեցէք Service Canada www.servicecanada.gc.ca կամ findlink.at/UChildCB

1-855-626-0002
www.orientationontario.ca



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Օնթարիո գործեր - Ontario Works (OW)

Ontario Works (OW) ծրագիրը կ'ապահովի ֆինանսական աջակցություն մարդոց որոնք առժամայ ֆինանսական կարիքի մեջ են: Ծրագիրը նաև կ'ապահովի աջակցություն գործ գտնելու համար:

Օնթարիո հաշմանդամության աջակցության ծրագիր (Ontario Disability Support Program (ODSP))

Այս ծրագիրը կ'օգնի անկարող մարդոց որոնք ֆինանսական կարիքի մեջ են: (ODSP)-ն նաև կ'օգնի հաշմանդամ մարդոց, որոնք կարող են աշխատելու, իրենց գործ գտնելու:

Յուրաքանչյուր տեղեկություններու համար (ODSP)-ի մասին, այցելեցեք Ministry of Community and Social Services www.mcscs.gov.on.ca կամ findlink.at/Ont-DSP

Գիտե՞ք թե:

Ծերության անվտանգության կենսաթոշակ (OAS)-ի սկսելու տարիքը աստիճանաբար կը փոխուի: Այս փոփոխությունը ազդեցություն պիտի ունենայ այն մարդոց որոնք ծնած են 1958 թուականին, եւ անկէ վերջ, որովհետեւ իրաւունք ունենալու տարիքը պիտի աւելնայ:

